ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 հուլիսի 2013թ. թիվ 116-Ա

Կ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 109 հոդվածի 1-ին կետի 11-րդ ենթակետի եւ 130-րդ հոդվածի, ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.17 կետի «ա» ենթակետով, հիմք ընդունելով ՔԿԱԳ Ստեփանավանի տարածքային ստորաբաժանման կողմից 2013 թվականի հուլիսի 11-ին տրված ԱԲ N111710 մահվան վկայականը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. «Գյուլագարակի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Կիմ Կարապետի Ավանեսյանի հետ 2008 թվականի հունվարի 18-ին կնքված աշխատանքային պայմանագիրը համարել լուծված 2013 թվականի հուլիսի 6-ից՝ նրա մահվան կապակցությամբ:

2. «Գյուլագարակի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՓԲԸ-ի հաշվապահին՝

Կատարել վերջնահաշվարկ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2013թ. հուլիսի 13
ք.Վանաձոր